ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՀԱՅՑՈՐԴ ՏՐԱՄԱԴՐՈՂԻՆ՝ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՐՏՈՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵՑ ԿԱՄ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՆԴԵՊ/ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԽԱԲԵԲԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ) [ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ **12305.81]**

(ՀԱՍՑԵԱՏԵՐ)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Հայցորդ տրամադրողի անունը՝ _____
Ստացողի անունը՝ _____
Ստացողի գործի համարը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ուղղված՝ Տնային աջակցության ծառայություններ(IHSS) Տրամադրողին

Քրեական դատապարտման պատճառով՝ վարչաշրջանը/Պետական իշխանության մարմինը/Շահույթ չհետապնդող միավորումը մերժել է ձեր ընտրվելու իրավունքը՝ գրանցվել որպես IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ծառայություններ տրամադրելու համար:

☐ Որպես տրամադրողի գրանցման գործընթաց, այս անձնավորությունը մատնահետքեր է ներկայացրել Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտ՝ հանցագործ կենսագրության ստուգման համար: Կենսագրության այս ստուգումը ցույց տվեց, որ դուք դատապարտված եք եղել այնպիսի հանցագործության (հանցագործությունների համար)համար, որ այն իրավունք չի տալիս ձեզ դառնալ IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ծառայություններ տրամադրելու համար՝ Բարեկեցության և Հաստատությունների Օրենսգրքի (W&IC) 12305.81 բաժնի համաձայն:

☐ Վարչաշրջանը/Պետական իշխանության մարմինը/Շահույթ չհետապնդող միավորումը տեղեկացել է, որ դուք դատապարտվել եք հանցագործության (հանցագործությունների) համար, որն իրավունք չի տալիս ձեզ աշխատել որպես IHSS տրամադրող կամ վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ծառայություններ տրամադրելու համար՝ Բարեկեցության և Հաստատությունների Օրենսգրքի (W&IC) 12305.81 բաժնի համաձայն: Դատապարտումն ստուգվել է դատարանի փաստաթղթերի միջոցով:

Հանցագործությունը (ները), որը ձեզ որակազրկել է, ներկայացված է ստորև.

_____
_____
_____
_____
_____
_____

Ստացողին, ով որոշել է ձեզ վարձել, նույնպես ծանուցում է ուղարկվել՝ տեղեկացնելով, որ դուք դատապարտվել եք հանցագործության համար, որի պատճառով իրավունք չունեք աշխատել որպես IHSS տրամադրող: Ստացողը տեղեկացվել է, որ դատապարտման վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց զգայուն բնույթ է կրում և պետք է խիստ գաղտնի պահվի: Ստացողին օրենքով արգելվում է այս տեղեկատվության ցանկացած մաս որևէ անձի կամ հաստատության հայտնել:

Եթե դուք համաձայն չեք այս որոշման հետ, կից SOC 856՝ «Բողոքարկում պահանջել Տրամադրողի Գրանցման մերժման համար» ձևաթղթում բացատրվում է, թե ինչպես դուք կարող եք բողոքարկում պահանջել: Ձեր գրավոր հայցը պետք է ստացվի վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում՝ սույն ծանուցման ամսաթվից սկսած:

Եթե դուք գտնում եք, որ վարչաշրջանի/Պետական իշխանության մարմնի/Շահույթ չհետապնդող միավորման IHSS գրասենյակին տրամադրված տեղեկատվությունը ճշտգրիտ չէ, դուք պետք է կապվեք Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտի Արձանագրությունների վերանայման բաժանմունքի հետ՝ (916) 227-3849 հեռախոսահամարով կամ_____ Վարչաշրջանի Գերագույն դատարանի քարտուղարին՝ պարզելու տեղեկատվության աղբյուրը և ուղղելու դատարանի փաստաթղթերում պարունակվող տեղեկատվություն կամ ձեր հանցագործության նախապատմության ստուգումը:

Եթե սույն նամակի վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք զանգահարել՝ _____: